վճարվել էր հայցվորի կողմից, իսկ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ հայցը բավարարվում է, ուստի գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 255.000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 300-րդ, 302-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի հայցն ընդդեմ <<Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն>> ՓԲԸ-ի, երրորդ անձ՝ <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ի՝ ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը՝ <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի հայտը մերժելու մասով, անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ին ընտրված/հաղթող մասնակից ճանաչելու արձանագրության 4-րդ կետը անվավեր ճանաչելու և ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած ճանաչելու պահանջների մասին, բավարարել՝

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրությունը՝ <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի հայտը մերժելու մասով, ճանաչել անվավեր, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել <<ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ՓԲԸ-ին ընտրված/հաղթող մասնակից ճանաչելու արձանագրության 4-րդ կետը և ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-24/18 ծածկագրով գնման ընթացակարգը ճանաչել չկայացած:

2. <<Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> ԱՓԲԸ-ի բռնագանձել 255.000 (երկու հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**